ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/128

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.05.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7647-2022 գրությամբ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի 21.04.2022թ. գրության հիման վրա, 29.04.2022թ. թիվ 26/26-1/7647-2022

գրությամբ նախաձեռնել է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/128 ընթացակարգի շրջանակներում 20.05.2022թ. ժամը 15:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է, որ Պատվիրատուն թույլ է տվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված 5-օրյա ժամկետի խախտում, ապրիլի 6-ին մերժել է Ընկերության հայտը, սակայն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով լիազորված մարմին ուղարկել է 21.04.2022թ.:

3. «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի կողմից կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.04.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «182ԱԴՊ-ԳՀԽԾՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում՝ (այսուհետ՝ Ընթացակարգ), «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում, մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Հայտաբերված անհամապատասխանությունների շտկման նպատակով գնահատող հանձնաժողովը 1 (մեկ) աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացրել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է անհամապատախանությունների շտկում, սակայն որոշակի թերություններով, մասնավորապես.

-«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է թվով 6 պաամանագիր 8 700 000 /ութ միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ, 584 000 /հինգ հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ, 345 000 /երեք հարյուր քառասունհինգ հազար /ՀՀ դրամ, 900 000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ, 1000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ և 1 970 000 /մեկ միլիոն ինը հարյուր յոթանասաուն հազար/ ՀՀ դրամ գումարային ծավալներով, որից հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է 8 700 000 / ութ միլիոն յոթ հարյուր հազար/, 584000 /հինգ հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ և 345000 /երեք հարյուր քառասունհինգ հազար /ՀՀ դրամ արժողությամբ պայմանագրերը, ընդհանուրը՝ 9 629 000 /ինը միլիոն վեց հարյուր քսանինը հազար/ ՀՀ դրամ , որը չի բավարարում հրավերի պահանջներին՝ ցածր է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկից, բացակայում են ներկայացված 584000 / հինգ հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ արժողությամբ պայմանագրի հանձնման-ընդունման փաստաթղթերը: Ներկայացված բոլոր պայմանագրերի մասով բացակայում են հարկային հաշիվները և/կամ հաշվարկային փաստաթղթերը, հանձնման-ընդունման փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստը և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7-րդ մասի 7.10 կետի դրույթները (այն է՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է) , «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 45-րդ կետով սահմանված պահանջները՝ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով կից Ձեզ է ներկայացվում ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/128 ընթացակարգի շրջանակներում 20.05.2022թ. ժամը 15:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի կողմից հայտարարվել է «182ԱԴՊ-ԳՀԽԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 06.04.2022թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը, որոշում է կայացրել «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

3. «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.04.2022թ. գրությամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7647-2022 գրությունը, «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի 21.04.2022թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամի կողմից հայտարարվել է «182ԱԴՊ-ԳՀԽԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 06.04.2022թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը, որոշում է կայացրել «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

«Գ. Էմինի անվան 182 ավագ դպրոց» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.04.2022թ. գրությամբ:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով և հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2022թ. թիվ 2 արձանագրությունը՝ արձանագրում եմ, որ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***<u>06.04.2022թ</u>***., սակայն, Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***<u>21.04.2022թ.,</u>*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի

սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ

իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի

կարող վրա հասնել և հանգեցնել «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7647-2022 գրությամբ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**